«ՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (Խ-326-25.10.2019-ՖՎ-011/0) ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

| N | ԱՌԱՋԱՐԿԻ ՀԵՂԻՆԱԿԸ | ՆԱԽԱԳԾԻ ԱՅՆ ՄԱՍԸ, ՈՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՒՄ Է ԱՌԱՋԱՐԿԸ | ԱՌԱՋԱՐԿԸ | ԱՌԱՋԱՐԿՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՄ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԻՄՆԱԿԱՆ ԶԵԿՈՒՑՈՂԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ | ԱՌԱՋԱՐԿՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՄ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ |
|---|---|---|---|---|---|
| 1. | Պատգամավոր Մանե Թանդիլյան | Նախագծի 1-ին հոդված՝«Եթե կենսաթոշակառուն ունի տեղաշարժման խնդիր, Հայաստանի Հանրապետությունում գտնվելու փաստը կենսաթոշակառուի ցանկությամբ կարող է հաստատվել բանկի կողմից՝ հեռահար եղանակով (առանց բանկ ներկայանալու)՝ Կառավարության կողմից սահմանված կարգի համաձայն:»: | Նախագծի 1-ին հոդվածը շարադրել հետևյալ կերպ. «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության 2010 թվականի դեկտեմբերի 22-ի ՀՕ-243-Ն օրենքի 35-րդ հոդվածի 6-րդ մասն առաջին պարբերությունից հետո լրացնել նոր պարբերությամբ. «Հայաստանի Հանրապետությունում գտնվելու փաստը բանկի կողմից՝ կարող է հաստատվել նաև առանց կենսաթոշակառուի բանկ ներկայանալու՝ Կառավարության սահմանած կարգով:»: | Ընդունելի է: | Ընդունվել է: |
| 2. | Պատգամավոր Մանե Թանդիլյան | Նախագծի 2-րդ հոդված « 1. Սույն օրենքն ուժի մեջ է | Նախագծի 2-րդ հոդվածը շարադրել հետևյալ կերպ.1. Սույն օրենքն ուժի մեջ է | Ընդունելի է: | Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | մտնում պաշտոնական հրապարակման օրվանից հետո՝ 3 ամիս անց:<br><br>2. Սույն օրենքի հրապարակմանը հաջորդող 3 օրացույցային ամսվա ընթացքում Հայաստանի Հանրապետության կառավարությունն ընդունում եւ իրականացնում է համապատասխան փոփոխություններ՝ սույն օրենքի 1-ին հոդվածով սահմանված գործընթացն ապահովելու նպատակով: | մտնում պաշտոնական հրապարակման օրվանից՝ 3 ամիս հետո:<br><br>2. Սույն օրենքի հրապարակումից հետո 3 ամսվա ընթացքում Հայաստանի Հանրապետության կառավարությունն ընդունում է համապատասխան իրավական ակտը: | | |